Լիվոռնոյ վերադառնալով, բազմաթիւ հակառակութիւններէ ետք, զորս կը յարուցանէին խարերայ և քսու հայեր, որոնք ոչ Ազգին և ոչ ալ Էջմիածնի օգուտը կ'ուզէին, այլ իրենց անձնական ցանկութիւնը և քմահաճոյքը, Ոսկան. Վարդապետ կը միաբանի երեք Ջուղայեցի վաճառականներու՝ Ստեփանոս Խանենցի, Թէոդորոս Քթռեչենցի և Պետրոս Տէր—Աւագեանի հետ, որոնք յանձն կ'առնեն միասին հոգալ Աստուածաշունչի տպագրութեան ամբողջ ծախքը՝ յօգուտ Ազգին և ի շահ Էջմիածնի։ Անոնք կը պայմանաւորուին այսպէս. Ստեփանոս և Պետրոս կը խոստանան Աստուածաշունչի վաճառումէն գոյանալիք շահը տալ Էջմիածնի. իսկ Թէոդորոս կը խոստանայ իր շահաբաժնին կէսը նուիրել Երուսաղէմի և միւս կէսը՝ Յուշոյ—Վանից Ս. Սարգսի։ Այս պայմանագրութեամբ Ոսկան կը դիմէ Ամստերդամ և կը տիրանայ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպարանին (9)։

Ան կը մնայ Ամստերդամ մինչև 1670. և կը տպագրէ 17 գրքեր՝ Այբբենարան, Համառօտ Քրիստոնեական, Քերականութիւն, Ժամագիրք, Մաշտոց, Նոր Կտակարան, Ձայնքաղ Շարական, Մովսէս Խորենացիի վերագրուած Աշխարհագրութիւնը, «Վարդանայ

(9) Լեօ, Անդ, 449—450. Յիշատակարան Աստուածաշունչի։ Չամչեան, Գ.659-660: